

[1] Հույս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Մերիա	[3] Համար
22	Մարտ	2019 թ.		Բ	8461784356
[4] Մատուցման ամսաթիվ				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
22	Մարտ	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
			22 Մարտ, 2019 թ.	Բ8461784356	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ					
[7.1] ՀԴՄ կտրոնի համար					

Ծառայությունների մատուցող (աշխատանքներ կատարող) անձի									
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	0	0	6	8	1	3	
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը									
[10] Անվանումը	ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)								
[11] Բանկային տվյալները	Հայէկոնոմբանկ ԲԲԸ N 163288639103								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ՁԵՅԹՈՒՆ ՔԱՆԱՔԵՌ-ՁԵՅԹՈՒՆ ԹԱՂԱՄԱՍ ԴԱՆՀԱՂԹ 19/1 70								
[13] Լրացուցիչ տվյալներ									

Ծառայությունների (աշխատանքների) ստացող անձի									
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	1	5	3	3	3	3	4	
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը									
[16] Անվանումը	ՀՀ ԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ կառավարչական հիմնարկ								
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ Աշխատակազմի գործառնական վարչություն N 900011021947								
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ Նալբանդյան 130								
[19] Լրացուցիչ տվյալներ									
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն								
	Ի, հազարագիր		Համար						
			Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№ ը/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափ միավորը	Ընդհանուր ծավալ կամ ծավալահաշիվ ըջանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ Ո ԿՀԴՊ գլխավոր վարչ.3-րդ վարչ.3-րդ բաժնի պետի տեղակալ՝ Լ.Պողոսյանի որոշմ. իրավ. բան. թարգմ. հայ.-ռուս.	ժամ	3	5000		15000
2	ՀՀ Ո ԿՀԴՊ ԳՎ ԿՎ բաժնի հետաքննութ. գծով ավագ տեսուչ՝ Ա. Այվազյանի որոշմ. իրավ. բան. թարգմ. հայ.-ռուս. - հայ.	ժամ	7.5	5000		37500
3	ՀՀ Ո ԿՀԴՊ ԳՎ ԿՎ բաժնի հետաքնն. գծով ավագ տեսուչ՝ Ա. Այվազյանի որոշմ. իրավ. գրավոր թարգմ. հայ.-ռուս. - հայ.	էջ	7	2500		17500
4	ՀՀ Ո ԿՀԴՊ գլխավոր վարչ.3-րդ վարչ. 2-րդ բաժնի պետ՝ Վ. Հովսեփյանի որոշմ. իրավ. բանավոր թարգմ. հայ.-հնդկ.	ժամ	14.5	7500		108750
5	ՀՀ Ո ԿՀԴՊ գլխ. վարչ.3-րդ վարչ.2-րդ բաժնի պետի տեղակալ՝ Հ. Մկրտչյանի որոշմ. իրավ. բան. թարգմ. հայ.-ֆրանս.	ժամ	4	7000		28000
6	ՀՀ Ո ԿՀԴՊ գլխ. վարչ.3-րդ վարչ.3-րդ բաժնի ՀԿԳ ավագ օ/լ՝ Մ. Աղաջանյանի որոշմ. իրավ. գրավոր թարգմ. հայ. անգլ.	էջ	12	3500		42000
7	ԿՀԴՊ ԳՎ կողմ. տնտ. գործ. դեմ ուղղ. հան. հակ. վարչ.5-րդ բաժնի ավագ օ/լ՝ Կ. Կոստանյանի որոշմ. թարգմ. հայ. պարսկ.	ժամ	4.5	7000		31500
8	ՀՀ Ո ԿՀԴՊ ԳՎ ԿՎ բաժնի հետաքնն. գծով ավագ տեսուչ՝ Ա. Այվազյանի որոշմ. իրավ. բանավոր թարգմ. հայերեն-անգլ.	ժամ	4.5	7000		31500

9	ԿՀԴՊԳՎ կոռ.և տնտ.գործ.դեմ ուղղ.հան.հակ.վարչ.5-րդ բաժնի ավագ օ/՝ Կ. Կոստանդյանի որոշմ.թարգմ.հայ.պարսկ.	ժամ	1.5	7000		10500
10	ԿՀԴՊԳՎ կոռ.և տնտ.գործ.դեմ ուղղ.հան.հակ.վարչ.5-րդ բաժնի ավագ օ/՝ Կ. Կոստանդյանի որոշմ.գրավ.պարս.հայ.	էջ	4	3500		14000
11	ԿՀԴՊ ԳՎ կոռ.և տնտ.գործ.դեմ ուղղ.հանց.հակ.վարչ.2-րդ բաժնի պետ՝ Ա. Բարսեղյանի որոշմ.իրավ.գրավ.հայ.անգլ.	էջ	4	3500		14000
12	ՀՀ Ո ԿՀԴՊ գլխավոր վարչ.ԿՎ բաժնի հետաքն.գծով ավագ տեսուչ՝ Ա.Այվազյանի որոշմ.իրավ.բան.թարգ.հայ.-ռուս.	ժամ	3.5	5000		17500
13	ՀՀ Ո ԿՀԴՊ գլխավոր վարչ.ԿՎ բաժնի հետաքն.գծով ավագ տեսուչ՝ Ա.Այվազյանի որոշմ.իրավ.բան.թարգ.հայ.-ռուս.	ժամ	3.5	5000		17500
14	ՀՀ Ո ԿՀԴՊ գլխ.վարչ.3-րդ վարչ.-ին բաժնի ՀԿԳ ավագ օ/՝ Մ.Կարապետյանի որոշմ.իրավ.բան.թարգմ. հայ.-ռուս.	ժամ	1.5	5000		7500
15	ՀՀ Ո ԿՀԴՊ գլխ.վարչ.ԿՀԽ ԴՊ բաժնի պետ՝ Տ Սահակյանի որոշմ.իրավ.գրավոր թարգմ. հայերենից անգլերեն	էջ	2	3500		7000
Ընդամենը						399750

Ծառայություն
մատուցող
(աշխատանք
կատարող)

KHACHATRYAN ARTUR
3208790082

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

22/03/2019 15:29:25

Ծառայություն
(աշխատանք)
ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

/Թարգմանիչ հրավիրելու մասին/

24.10.2018թ.

ք.Երևան

ՀՀ ոստիկանության ԿՀԴԴ ԳՎ 3-րդ վարչության 3-րդ բաժնի պետի տեղակալ, ոստիկանության կապիտան Լ.Պողոսյանս, վերանայելով ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատնից ստացված նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ ոստիկանության ԿՀԴԴ գլխավոր վարչությունում Միխայիլ Իվանի Յուրտանի վերաբերյալ նախապատրաստվող նյութերով պարզվել է, որ 2018 թվականի սեպտեմբերի 6-ին Միխայիլ Յուրտանը ԱՄՆ դեսպանատան հյուպատոսական ծառայություն է ներկայացրել Երևանի թիվ 27 Պրոֆտեխ. ուսումնարանն ավարտելու մասին 20.07.1991թ.-ին տրված թիվ Դ 562254 սերիայի և համարի դիպլոմը: 2018 թվականի հոկտեմբերի 16-ին դեսպանատան հյուպատոսական ծառայությունը հայտնադիր է ստացել Արտաքին գործերի նախարարությունից, որով հաստատվում է, որ Կրթության և գիտության նախարարությունից ստացված գրության համաձայն Երևանի թիվ 27 Պրոֆտեխ. ուսումնարանի սովորողների հրամանագրերը չեն պահպանվել, իսկ դիպլոմների բաշխման մատյանում Միխայիլ Իվանի Յուրտանի անունը գրանցված չէ:

Քանի որ, Միխայիլ Յուրտանը ՀՀ քրեական դատավարության՝ հայերեն գրավոր լեզվին չի տիրապետում, իսկ Վարդուհի Շահինյանը ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, չափազորգոված չէ գործի ելքով, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել նրան թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Սույն նյութերով հրավիրել «ԱՐԹ ԶՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի թարգմանիչ Վարդուհի Ավետիսի Շահինյանին, որն ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, գործով չչափազորգոված անձ է:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
/ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՃԱՆԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ /

05.11.2018թ.

ք.Երևան

ՀՀ Ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ԿՎ բաժնի հետաքննության գծով ավագ տեսու
ոստիկանության մայոր Ա.Ս.Այվազյան, վերանայելով Սերգեյ Էդուարդի Սարկիսովի հաղորդման
առթիվ նախապատրաստված նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2018թ-ի նոյեմբերի 5-ին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում Սերգեյ Էդուարդի
Սարկիսովը հաղորդում է տվել, որ 26.10.2018թ-ին ժամը 12.07-ի սահմաններում անհայտ անձ
+380631955400 հեռախոսահամարից զանգահարելով իրեն և հանդես գալով Լեվ Յակովի Խլյավիչ
անունից պահանջել է վերջինիս փոխանցել 10.000.000 ԱՄՆ դոլար գումար, հակառակ դեպքում
սպառնացել է բռնություն կիրառել իր երկվորյակ երեխաների հանդեպ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ
83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սերգեյ Էդուարդի Սարկիսովի հաղորդման առթիվ նախապատրաստված նյութերով հաշվ
առնելով, որ վերջինս չի տիրապետում հայերեն գրավոր-բանավոր խոսքին և ազատ տիրապետու
մ ռուսերեն գրավոր և բանավոր խոսքին նրանից բացատրություն վերցնելու համար որպե
թարգմանիչ հրավիրել <<Արտ Քոնսալթինգ>> ՍՊԸ-ի աշխատակից Գայի պողոտա 1 շենքի 2
բնակարանի բնակիչ 1980թ.ծ Արթուր Սամվելի Մովսիսյանին ով հանդիսանում ռուսերեն լեզվ
գրավոր և բանավոր խոսքի թարգմանիչ և գործով չշահագրգռված անձ է:

2. Որպես թարգմանիչ Արթուր Սամվելի Մովսիսյանին պարզաբանել նրա իրավունքները և
պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու
համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական
պատասխանատվության մասին, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

Արթուր Սամվելի Մովսիսյան




ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքները
պարզաբանվել են:

Արթուր Սամվելի Մովսիսյան



Ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ԿՎ բաժնի հետաքննության
գծով ավագ տեսուչ, ոստիկանության մայոր



Ա.Ս.Այվազյան

3

ՈՐՈՇՈՒՄ

/ Թարգմանիչ հրավիրելու մասին /

<<08>> 11. 2018թ.

ք.Երևան

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության 3-րդ վարչության 2-րդ բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վ. Հովսեփյան, վերանայելով Ալի Խան Պառվեզի կողմից Հնդկաստանի քաղաքացիներին թրաֆիքինգի ենթարկելու վերաբերյալ ստացված տեղեկությունների հիման վրա նախապատրաստվող նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ստացված տեղեկությունները ստուգելու նպատակով 2018թ. նոյեմբերի 8-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժին են հրավիրվել Երևան քաղաքի Դավիթ Անհաղթ փողոցի 10/1 հասցեում գործող հնդկական խոհանոց ռեստորանի աշխատակիցներ Նարենդրա Չաուհան Սինգի, Մոհի Մոհամեդ Իոֆանը, Աուլակ Հարվինդեր Սինգի և Նաուֆալ-Ալտաֆ-Վարսի Քհանը:

Քանի որ վերջիններս ՀՀ քրեական դատավարության՝ հայերեն լեզվին չեն տիրապետում, իսկ Հերմինե Այվազյանն ազատորեն տիրապետում է հայերեն և հնդկերեն լեզուներին, շահագրգռված չէ գործի ելքով, իսկ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել նրանց թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իրենց իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն նյութերով հրավիրել «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի թարգմանիչ Հերմինե Այվազյանին, որն ազատորեն տիրապետում է հայերեն և հնդկերեն լեզուներին, գործով չշահագրգռված անձ է:

2. Թարգմանչուհի Հերմինե Այվազյանին պարզաբանել նրա պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

ԿՀԴՊ ԳՎ 3-րդ վարչության 2-րդ բաժնի
պետ, ոստիկանության փոխգնդապետ՝

Վ. Հովսեփյան



4

ՈՐՈՇՈՒՄ

/ Թարգմանիչ հրավիրելու մասին /

<<12>> 11. 2018թ.

ք.երևան

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության 3-րդ վարչության 2-րդ բաժնի պետի տեղակալ, ոստիկանության կապիտան Հ.Մկրտչյան, վերանայելով ՀՀ ԱԳՆ-ից ստացված գրությունը և կից նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ՀՀ ԱԳՆ-ից ստացված գրության կապակցությամբ ստուգողական գործողություններ կատարելու համար անհրաժեշտ է պարզաբանումներ ստանալ Կոնգոյի Դեմոկրատական հանրապետության չորս քաղաքացիներից:

Քանի որ վերջիններս ՀՀ քրեական դատավարության՝ հայերեն լեզվին չեն տիրապետում, իսկ Հայկուիի Մելքոնյանը ազատորեն տիրապետում է հայերեն և ֆրանսերեն լեզուներին, շահագրգռված չէ գործի ելքով, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել նրանց թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իրենց իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն նյութերով հրավիրել «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի թարգմանիչ Հայկուիի Մելքոնյանին, որն ազատորեն տիրապետում է հայերեն և ֆրանսերեն լեզուներին, գործով չշահագրգռված անձ է:

2. Թարգմանչուիի Հայկուիի Մելքոնյանին պարզաբանել նրա պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

ԿՀԴՊ ԳՎ 3-րդ վարչության 2-րդ բաժնի
պետի տեղակալ, ոստիկանության կապիտան՝



Հ.Մկրտչյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

/Թարգմանիչ հրավիրելու մասին/

29.11.2018թ.

ք.Երևան

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ 3-րդ վարչության 3-րդ բաժնի ՀԿԳ ավագ օպերիվագոր, ոստիկանության կապիտան Մ.Աղաջանյանս, վերանայելով <<Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան>> ՓԲԸ-ից ստացված գրության հիման վրա նախապատրաստվող նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչություն է ստացվել <<Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան>> ՓԲԸ-ի գրությունն այն մասին, որ բանկի ֆինանսական հանցագործությունների վտանգի կանխարգելման բաժնի աշխատակիցներին սույն թվականի հոկտեմբերի 17-ին հայտնի է դարձել, որ Նաիրա Ռաֆայելի Դերմեջյանը / Կանադայի սահմանապահ ծառայության գրասենյակ է ներկայացրել նշված բանկում ունեցած հաշվի և դրա մնացորդների վերաբերյալ կեղծ տեղեկանք և տվյալ անձը չի հանդիսանում բանկի հաճախորդ:


Քանի որ նյութերի նախապատրաստման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել թարգմանել Կանադայի քրեական օրենսգրքի 366-378-րդ հոդվածները, իսկ Մարիաննա Սայադյանը ազատորեն տիրապետում է հայերեն և անգլերեն լեզուներին, շահագրգռված չէ գործի ելքով, ուստի վերոգրյալի հիման վրա և՛ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և 474-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Կանադայի քրեական օրենսգրքի 366-378-րդ հոդվածները անգլերենից հայերեն թարգմանելու համար հրավիրել «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մարիաննա Միսակի Սայադյանը, որն ազատորեն տիրապետում է հայերեն և անգլերեն լեզուներին, գործով չշահագրգռված անձ է:

2. Թարգմանիչ Մարիաննա Սայադյանին պարգարանել նրա պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

ԿՀԴՊ ԳՎ 3-րդ վարչության 3-րդ բաժնի ՀԿԳ ավագ օպերիվագոր,
ոստիկանության կապիտան

 Մ.Աղաջանյան

Սույն որոշումն ինձ հայտնվել է 29.11.2018թ.-ին: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարգարանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված՝ թարգմանչի պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ՝



Մ.Սայադյան

ԿՀԴՊ ԳՎ 3-րդ վարչության 3-րդ բաժնի ՀԿԳ ավագ օպերիվագոր,
ոստիկանության կապիտան

 Մ.Աղաջանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
/Թարգմանիչ ներգրավելու մասին/

14 դեկտեմբերի 2018թ.

ք.Երևան

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ կոռուպցիայի և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության 5-րդ բաժնի ավագ օպերիվագոր, ոստիկանության կապիտան Կ.Կոստանդյանս, քննարկելով ԻԻՀ քաղաքացի Համիդ Ահմադ Քամրանիի կողմից տրված բանավոր հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

13.12.2018թ. ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ կոռուպցիայի և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչություն ներկայացած <<Համեդ Էներժի նեգին փասարգադ>> իրանական ընկերության տնօրեն, ԻԻՀ քաղաքացի Համիդ Ահմադ Քամրանին բանավոր հաղորդում է տվել այն մասին, որ ԻԻՀ-ում ծանոթացել է Ասադոլլահ Ղասաբիի հետ և նրա հետ ձեռք է բերվել պայամանավորվածություն ՀՀ սելիտրա ներկրելու և վերջինիս փոխանցելու վերաբերյալ: Ըստ պայամանավորվածության իր կողմից պետք է ՀՀ ներկրվեր և Ղասաբիին փոխանցվեր ընդհանուր 10000 տոննա սելիտրա, որից հետո 31.05.2018-07.08.2018թ.թ. ընկած ժամանակահատվածում ՀՀ է ներկրվել և Ղասաբիին է փոխանցվել 850 տոննա սելիտրա, որի ընդհանուր արժեքը կազմել է 259250 ԱՄՆ դոլար, սակայն Ասադոլլահ Ղասաբին իրեն վճարել է ընդամենը 79955 ԱՄՆ դոլար, իսկ մնացած ապրանքը, որի ընդհանուր արժեքը կազմում է 179295 ԱՄՆ դոլար, վերջինիս վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակվել է Ասադոլլահ Ղասաբիի կողմից:

Նկատի ունենալով, որ Համիդ Ահմադ Քամրանին ու նյութերի նախապատրաստման ընթացքում ի հայտ եկած և նշված դեպքի հետ առնչություն ունեցող, ԻԻՀ քաղաքացի Իբրահիմ Նասիրը և այլ անձիք հայերեն գրավոր և բանավոր լեզվին չեն տիրապետում, իսկ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի ՀՀ քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Նյութերի նախապատրաստման ընթացքում որպես թարգմանիչ ներգրավել «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի աշխատակից՝ Հերոս Դիդարյանտին:
2. Թարգմանիչ Հերոս Դիդարյանտին պարզաբանել նրա պարտականություններն ու իրավունքները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ԿՀԴՊ ԳՎ 1-ին վարչության 5-րդ բաժնի
ավագ օպերիվագոր, ոստիկանության կապիտան՝  Կ.Կոստանդյան

Սույն որոշումն ինձ հայտնվել է 2018 թվականի դեկտեմբերի 14-ին: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականությունները և իրավունքները:

Թարգմանիչ՝



Հ. Դիդարյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց.

ԿՀԴՊ ԳՎ 1-ին վարչության 5-րդ բաժնի
ավագ օպերիվիազոր, ոստիկանության կապիտան՝



Կ. Կոստանդյան

7

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
/ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ /

18.12.2018թ.

ք.Երևան

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ԿՎ բաժնի հետաքննության գծով ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ա.Ս.Այվազյան, վերանայելով Արմեն Հայկարամի Առաքելյանի հաղորդման առթիվ նախապատրաստված նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2018թ-ի դեկտեմբերի 15-ին ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ-ում Արմեն Հայկարամի Առաքելյանը հաղորդում է տվել, որ նույն օրը ժամը 15.00-ից 15.45-ն ընկած ժամանակահատվածում Էջմիածին քաղաքի Խորենացի փողոցում մի խումբ իրեն անհայտ անձինք հարձակվել են <<Նոր Հայաստան Նոր Հայրապետ>> շարժման մասնակիցների ավտոշարայան վրա, որի ընթացքում ծեծի են ենթարկել շարժման մասնակիցներին, կոտրել նրանց ավտոմեքենաները, հայիռել և վիրավորական արտահայտություններ տվել նրանց հասցեին, ինչպես նաև գումար է ենտել նրանց վրա:

Հաղորդման առթիվ նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ միջադեպին ներկա է գտնվել նաև <<Նոր Հայաստան Նոր Հայրապետ>> շարժման մասնակիցներ ամուսիններ ՀՀ քաղաքացի Սոնյա Շավարշի Միթչելը և Ավստրալիայի Հանրապետության քաղաքացի Պիտեր Ջոն Միտչելը, որոնք կարող են դեպքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող տեղեկություններ հայտնել:

Ելնելով վերոգրյալից և դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ա.Առաքելյանի հաղորդման առթիվ նախապատրաստված նյութերով հաշվի առնելով, որ Սոնյա և Պիտեր Միթչելները չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր խոսքին, սակայն ազատ տիրապետում է անգլերեն գրավոր և բանավոր խոսքին նրանից բացատրություն վերցնելու համար որպես թարգմանիչ հրավիրել <<Արթ Քոնսալթինգ>> ՍՊԸ-ի թարգմանչուհի Լառ Կամսարի 30/2 շենքի 23/1 բնակարանի բնակիչ 1979թ.ծ Ելենա Ռաֆաելի Զախարյանին ով հանդիսանում անգլերեն լեզվի գրավոր և բանավոր խոսքի թարգմանիչ և գործով չչահագրգռված անձ է:

2. Ելենա Ռաֆաելի Զախարյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված՝ թարգանչի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

ԿՀԴՊ գլխավոր վարչության ԿՎ բաժնի հետաքննության գծով ավագ տեսուչ, ոստիկանության մայոր

Ա.Ս.Այվազյան

Սույն որոշումն ինձ ծանոթացվել է, միաժամանակ պարզաբանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացված եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

/ստորագրություն, անուն ազգանուն/

8

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
/Թարգմանիչ ներգրավելու մասին/

22 դեկտեմբերի 2018թ.

ք.Երևան

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ կոռուպցիայի և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության 5-րդ բաժնի ավագ օպերիվադոր, ոստիկանության կապիտան Կ.Կոստանդյանս, քննարկելով ԻԻՀ քաղաքացի Համիդ Ահմադ Քամրանի կողմից տրված բանավոր հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

13.12.2018թ. ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ կոռուպցիայի և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչություն ներկայացած <<Համեդ Էներժի նեգին փասարգադ>> իրանական ընկերության տնօրեն, ԻԻՀ քաղաքացի Համիդ Ահմադ Քամրանին բանավոր հաղորդում է տվել այն մասին, որ ԻԻՀ-ում ծանոթացել է Ասադոլլահ Ղասաբիի հետ և նրա հետ ձեռք է բերվել պայամանավորվածություն ՀՀ սեյտրա ներկրելու և վերջինիս փոխանցելու վերաբերյալ: Ըստ պայամանավորվածության իր կողմից պետք է ՀՀ ներկրվեր և Ղասաբիին փոխանցվեր ընդհանուր 10000 տոննա սեյտրա, որից հետո 31.05.2018-07.08.2018թ.թ. ընկած ժամանակահատվածում ՀՀ է ներկրվել և Ղասաբիին է փոխանցվել 850 տոննա սեյտրա, որի ընդհանուր արժեքը կազմել է 259250 ԱՄՆ դոլար, սակայն Ասադոլլահ Ղասաբին իրեն վճարել է ընդամենը 79955 ԱՄՆ դոլար, իսկ մնացած ապրանքը, որի ընդհանուր արժեքը կազմում է 179295 ԱՄՆ դոլար, վերջինիս վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակվել է Ասադոլլահ Ղասաբիի կողմից:

Նկատի ունենալով, որ Համիդ Ահմադ Քամրանին ու նյութերի նախապատրաստման ընթացքում ի հայտ եկած և նշված դեպքի հետ առնչություն ունեցող, ԻԻՀ քաղաքացի Իբրահիմ Նասիրը և այլ անձիք հայերեն գրավոր և բանավոր լեզվին չեն տիրապետում, իսկ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի ՀՀ քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Նյութերի նախապատրաստման ընթացքում որպես թարգմանիչ ներգրավել «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի աշխատակից՝ Ռոբերտ Թահմասյանին:
2. Թարգմանիչ Ռոբերտ Թահմասյանին պարզաբանել նրա պարտականություններն ու իրավունքները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

**ԿՀԴՊ ԳՎ 1-ին վարչության 5-րդ բաժնի
ավագ օպերիվադոր, ոստիկանության կապիտան՝**

 **Կ.Կոստանդյան**

Սույն որոշումն ինձ հայտնվել է 2018 թվականի դեկտեմբերի 22-ին: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականությունները և իրավունքները:

Թարգմանիչ՝



Ռ.Թահմասյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց.

ԿՀԴՊ ԳՎ 1-ին վարչության 5-րդ բաժնի
ավագ օպերիվազոր, ոստիկանության կապիտան՝



Կ.Կոստանդյան

/Թարգմանիչ ներգրավելու մասին/

04 հոկտեմբերի 2018թ.

ք.Երևան

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ կոռուպցիայի և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության 2-րդ բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա. Բարսեղյանս, վերանայելով վարույթում գտնվող թիվ 58161918 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

18.09.2018թ. ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ-ում ստացվել է ՀՀ վարչապետի օգնականի գրությունն այն մասին, որ <<Դուխով Հայաստան>> ֆեյսբուքյան էջում, որը ըստ աղբյուրների, պատկանում է <<Կյանքի Խոսք>> կազմակերպությանը, պարբերաբար տարածվում են կեղծ և ոչ հավաստի տեղեկություններ, հնչեցվում են կոչեր, որոնք անմիջականորեն խաթարում են ՀՀ և Արցախի տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև կասկածի տակ են դնում Արցախյան գոյամարտի ամբողջ տրամաբանությունը, մասնավորապես՝ 12.09.2018թ. ՀՀ փոխվարչապետ Արարատ Միրզոյանի անունից հրապարակվել է ազատագրված տարածքները հանձնելու, այդ մասին ՀՀ վարչապետի կողմից իբրև թե ադրբեջանցիների հետ արդեն իսկ բանակցելու, Արցախի հայկական պատկանելիությունը հերքելու և Ադրբեջանին տուգանք վճարելու մասին իրականությանը չհամապատասխանող հրապարակային կարծիքը:

Նյութերի նախապատրաստման ընթացքում ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ հրավիրված <<Հայաստանի ավետարանական հավատքի քրիստոնյաների <<Կյանքի Խոսք>> եկեղեցի կրոնական կազմակերպության մամուլի խոսնակ Արմեն Լույսյանը բացատրություն է տվել այն մասին, որ չնայած <<Դուխով Հայաստան>> ֆեյսբուքյան էջում նշված՝ ք. Երևան, Թբիլիսյան խճ. 9/1 հասցեին և 010-23-83-30 հեռախոսահամարին, որոնք պատկանում են իրենց կազմակերպությանը, ինչպես նաև 20.09.2018թ. իրենց հովիվ առաջնորդ Արթուր Սիմոնյանի անունից կատարված հրապարակմանը՝ <<Էջմիածինը շատ հին եկեղեցի է, պետք է քանդվի և տեղը կառուցվի ավելի ժամանակակից կառույց: Իրականում Կյանքի Խոսքն ամենաճշմարիտ հավատքն է.....>>, նշված ինտերնետային էջի հետ որևէ առնչություն չունեն և տեղյակ չեն, թե դա ում նախաձեռնությունն է: Միաժամանակ Ա. Լույսյանը հայտնել է, որ <<Դուխով Հայաստան>> ֆեյսբուքյան էջում կատարված հրապարակումները կրոնական թշնամանք և ատելություն են սերմանում իրենց հանդեպ, ունեցել են բազմաթիվ դիտումներ և դրանց տակ եղած մեկնաբանություններից ելնելով՝ մտահոգ են իրենց կյանքի, առողջության, ինչպես նաև իրենց գույքի համար:

Դեպքի առթիվ 01.10.2018թ. ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ 1-ին վարչության 2-րդ բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 58161918 քրեական գործը և ընդունվել վարույթ:

Նկատի ունենալով, որ <<Facebook.com>> սոցիալական կայքի <<Դուխով Հայաստան>> <https://www.facebook.com/DuxArmenia> անվամբ գրանցված էջին հասանելիություն ստացած IP հասցեները և դրանք օգտագործած բաժանորդի անհատական տվյալները պարզելու միջոցով հնարավոր է բացահայտել


հանցագործությունը, անհրաժեշտություն է առաջացել նախապատրաստված նյութերով կատարել գրավոր թարգմանություն հայերենից անգլերեն, իսկ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ուստի ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Նյութերի նախապատրաստման ընթացքում որպես թարգմանիչ ներգրավել «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊ ընկերության աշխատակցուհի Մարիաննա Սայադյանին:

2. Թարգմանիչ Մարիաննա Սայադյանին պարզաբանել նրա պարտականությունները ու իրավունքները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

**ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ
1-ին վարչության 2-րդ բաժնի պետ,
ոստիկանության փոխգնդապետ՝**



Ա. Բարսեղյան

Սույն որոշումն ինձ հայտնվել է 2018 թվականի հոկտեմբերի 4-ին: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչ պարտականությունները և իրավունքները:


Թարգմանիչ՝



Մ. Սայադյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց՝

**ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ
1-ին վարչության 2-րդ բաժնի պետ,
ոստիկանության փոխգնդապետ՝**



Ա. Բարսեղյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
/ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ /

13.01.2019թ.

ք.Երևան

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ԿՎ բաժնի հետաքննության գծով ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ա.Ս.Այվազյանս, վերանայելով Տ.Սահակյանի զեկուցագրի հիման վրա նախապատրաստված նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ԿՀԻՆ ԴՊ բաժնից զեկուցագիր է ստացվել, որ ապօրինի զենք, զինամթերք և սառը զենք պահելու և կրելու կասկածանքով 2019թ-ի հունվարի 12-ին ժամը 22.15-ին ք.Երևան Հր.Քոչար-Վ.Վաղարշյան փողոցների խաչմերուկից և Հր.Քոչար 20 հասցեի մոտից «Տոյոտա» մակնիշի Օ 001 ՀՄ 23 РУС ՌԴ հաշվառման համարանիշի և «Տոյոտա» մակնիշի 88 ՕԴ 888 հաշվառման համարանիշի ավտոմեքենաներով ոստ. ԿՀԴՊ ԳՎ են բերման ենթարկվել Արտյոմ Վլադիմիրի Հարությունովը, Տիգրան Բորիսի Թամրազյանը, Աշոտ Գուրգենի Գևորգյանը, Ռոման Վյաչեսլավի Միրզոյանը, Վահագն Գառնիկի Գևորգյանը Արթուր Ռոբերտի Մադոյանը և Արման Սահակի Գրիգորյանը: Ա.Գրիգորյանի և Ա.Մադոյանի անձնական խուզարկությամբ Ա.Գրիգորյանի հագին եղած տաբատի աջ գրպանից հայտնաբերվել է ընդհանուր 23սմ շեղբինը՝ 10սմ երկարությամբ դանակ, իսկ Ա.Մադոյանի հագին եղած տաբատի աջ գրպանից հայտնաբերվել է ընդհանուր 21.5սմ շեղբինը՝ 10սմ երկարությամբ դանակ:

«Տոյոտա» մակնիշի Օ 001 ՀՄ 23 РУС ՌԴ հաշվառման համարանիշի ավտոմեքենայի զննությամբ ավտոմեքենայի հետևի նստատեղից հայտնաբերվել է մեկ փամփշտատուփ՝ լիցքավորված 20 հատ 5.45մմ տրամաչափի փամփուշտներով, հետևի նստատեղի հատակից հայտնաբերվել է մեկ հատ «Ֆաբարմ» ֆիրմայի PM 016496 գործարանային համարի հրացան՝ լիցքավորված թվով 6 հատ 12մմ տրամաչափի փամփուշտներով, նույն ավտոմեքենայի դիմացի աջ նստատեղի կողքից հայտնաբերվել է մեկ հատ «Սայգա» ֆիրմայի 13892226 գործարանային համարի հրացան իր փամփշտատուփով՝ լիցքավորված 30 հատ 5.45մմ տրամաչափի փամփուշտներով:

«Տոյոտա» մակնիշի 88 ՕԴ 888 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի զննությամբ հետևի նստատեղի վրայից հայտնաբերվել է երկու կտորե պատյան, որից մեկի մեջ առկա էր «Ֆաբարմ» ֆիրմայի PM 019871 գործարանային համարի հրացան և թվով 4 հատ 12մմ տրամաչափի փամփուշտներ, իսկ երկրորդ պատյանի մեջ՝ «Ֆաբարմ» ֆիրմայի PM 011736 գործարանային համարի հրացան և թվով 3 հատ 12մմ տրամաչափի փամփուշտներ:


Զեկուցագրի հիման վրա նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Արտյոմ Հարությունովը չի տիրապետում հայերեն գրավոր խոսքին, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի



1. Տ.Սահակյանի զեկուցագրի հիման վրա նախապատրաստված նյութերով հաշվի առնելով, որ Արտյոմ Հարությունովը չի տիրապետում հայերեն գրավոր խոսքին, սակայն ազատ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր խոսքին նրանից բացատրություն վերցնելու և նյութերով կազմված արձանագրություններին ծանոթացնելու համար որպես թարգմանիչ հրավիրել <<Արթ Բոնասալթինգ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Արթուր Սամվելի Մովսիսյանին ով հանդիսանում ռուսերեն լեզվի գրավոր և բանավոր խոսքի թարգմանիչ և գործով չշահագրգրված անձ է:

2. Արթուր Սամվելի Մովսիսյանին պարգաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված՝ թարգանչի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

ԿՀԴՊ գլխավոր վարչության ԿՎ բաժնի հետաքննության գծով
ավագ տեսուչ, ոստիկանության մայոր

 Ա. Ս. Այվազյան

Սույն որոշումն ինձ ծանոթացվել է, միաժամանակ պարգաբանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացված եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

 
/ստորագրություն, անուն ազգանուն/

12

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
/ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ /

04.02.2019թ.

ք.Երևան

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ԿՎ բաժնի հետաքննության գծով ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ա.Ս.Այվազյան, վերանայելով Տ.Սահակյանի զեկուցագրի հիման վրա նախապատրաստված նյութերը.

Պ Ա Ր Ջ Ե Ց Ի

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ԿՀԽ ԴՊ բաժնից զեկուցագիր է ստացվել որ ապօրինի զենք, զինամթերք պահելու և կրելու կասկածանքով 2019թ-ի փետրվարի 4-ին-ի ժամը 21:05-ին Երևան քաղաքի Հանրապետության Հրապարակից «Մերսեդես» մակնիշի T 007 PC 197 PYC ՌԴ հաշվառման համարանիշի և «Կադիլակ» մակնիշի C 007 OA 197 PYC ՌԴ հաշվառման համարանիշի ավտոմեքենաներով ոստ. ԿՀԴՊ ԳՎ են բերման ենթարկվել Արթուր Օնիկի Ասատրյանը, Արթուր Ռաֆիկի Սահակյանը, Դմիտրի Իգորի Օլխովատովինը, Սերգեյ Վլադիմիրի Կատուշկինը, Իվան Վիկտորի Ռազումսինը, Մուխոմ Վլադիմիրի Օլեգ, Վլադիմիր Վլադիմիրի Կատուշկինը:

Զեկուցագրի հիման վրա նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Դ.Օլխովատովը, Ի.Ռազումսին, Ս.Կատուշկինը, Վ.Մուխինը և Վ.Կատուշկինը հանդիսանում են ՌԴ քաղաքացիներ և չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր խոսքին, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Տ.Սահակյանի զեկուցագրի հիման վրա նախապատրաստված նյութերով հաշվի առնելով, որ Դ.Օլխովատովը, Ի.Ռազումսին, Ս.Կատուշկինը, Վ.Մուխինը և Վ.Կատուշկինը չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր խոսքին, սակայն ազատ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր խոսքին նրանցից բացատրություն վերցնելու և նյութերով կազմված արձանագրություններին ծանոթացնելու համար որպես թարգմանիչ հրավիրել <<Արթ Քոնսալթինգ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Արթուր Սամվելի Մովսիսյանին ով հանդիսանում ռուսերեն լեզվի գրավոր և բանավոր խոսքի թարգմանիչ և գործով չչափազորված անձ է:
2. Արթուր Սամվելի Մովսիսյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված՝ թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

ԿՀԴՊ գլխավոր վարչության ԿՎ բաժնի հետաքննության գծով ավագ տեսուչ, ոստիկանության մայոր

Ա.Ս.Այվազյան

Սույն որոշումն ինձ ծանոթացվել է, միաժամանակ պարզաբանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացված եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

/ստորագրություն, անուն ազգանուն/

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգման հրավիրելու մասին

<<26>> փետրվարի 2019թ

ք.Երևան

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության 3-րդ վարչության 1-ին բաժնի ՀԿԳ
ավագ օպերիվագոր, ոստիկանության կապիտան Մ.Կարապետյանս

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019թ. փետրվարի 22-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում
Սուսաննա Զավենի Անդրեասյանը հաղորդում է տվել, որ 2017թ. հունիս ամսվա ընթացքում
իր ծանոթ Գևորգ Գիժլարյանին վերադարձնելու պայմանով տվել է 20.000 ՌԴ ռուբլի, իսկ
երբ 2018թ. հունվար ամսին խնդրել է վերադարձնել գումարը, Գ.Գիժլարյանը հրաժարվել է՝
սպառնալով, որ համացանցում կտարածի իր մոտ եղած Ս.Անդրեասյանի մերկ
լուսանկարները:

Նյութերի նախապատրաստման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել
բացատրություն վերցնել Գևորգ Գիժլարյանից և նկատի ունենալով, որ վերջինս չի
տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ Լիանա Վաչագանի Կարապետյանը
/ծնված՝ 30.07.1973թ., հաշվառված ք.Երևան Բակունցի 2 շենք 41 բն., <<Արտ Քոնսալթինգ>>
ՍՊԸ ռուսերեն լեզվի թարգման/ ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր և
բանավոր լեզուներին, ունի բարձրագույն կրթություն, շահագրգռված չի գործի ելքով, ուստի
ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Լ.Կարապետյանին ճանաչել թարգման, նրան պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83
հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ
քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ Ավագ օպերիվագոր

Մ.Կարապետյանս

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են
իմ իրավունքներն ու պարտականությունները:

Թարգման՝

Լ.Կարապետյան

14.03.2019թ.

ք.Երևան

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ԿՀԽ ԴՊ բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Տ.Սահակյան, վերանայելով հետախուզման մեջ Սարգիս Սոսի Սարգսյանի վերաբերյալ նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ԿՀԽ ԴՊ բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով քննվող թիվ 29161318 քրեական գործով առանձնապես խոշոր չափի խարդախություն կատարելու մեղադրանքով 2018թ. սեպտեմբերի 24-ից հետախուզման մեջ գտնվող Սարգիս Սոսի Սարգսյանն /ծնված՝ 21.03.1980թ./ օգտագործում է Facebook սոցիալական ցանցում գրանցված <https://web.facebook.com/profile.php?id=100008559694530> նույնականացման համարով անհատական էջը:

Նկատի ունենալով, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ թույլատրվել է դիմել Facebook կազմակերպության անվտանգության ծառայությանը (Security Department of FACEBOOK INC, 1601 California Avenue, Palo Alto CA 94304, USA)՝ ստանալու նշված անհատական էջի IP հասցեներն ու անհատական էջի գրանցման տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Որպես թարգմանիչ ճանաչել «Արթ Բոնասաթինգ» ՍՊԸ-ի թարգմանչուհի Մարիաննա Սայադյանին, ով հանդիսանում է անգլերեն լեզվի գրավոր և բանավոր խոսքի թարգմանիչ և գործով շահագրգռված անձ չէ:

2. Մարիաննա Սայադյանին պարգաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված՝ թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ոստիկանության
ԿՀԴՊ ԳՎ ԿՀԽ ԴՊ բաժնի պետ՝

Տ.Սահակյան

Սույն որոշումն ինձ ծանոթացվել է, միաժամանակ պարգաբանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշվել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

/ստորագրություն, անուն, ազգանուն/